

ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ ՆՈՐՄԱՆ ՔԻՆԳՍԼԻ ՄԵՅԼԵՐԻ «ԱՄԵՐԻԿԱՆ ԵՐԱՁԸ» ԿԵՊՈՒՄ

Նորման Քինգսլի Մեյլերը (1923-2007) 20-րդ դարի ամերիկյան վիպագրության ամենակարևորումն ամերիկացուցիչներից է, մեկն այն գրողներից, որի գրական ժառանգությունը պատկառելի ներդրում է համաշխարհային գրականության մեջ: Նա մեծապես զարգացրեց էքզիստենցիալիզմի՝ գոյապաշտության գրական ավանդները և դրանց հաղորդեց ինքնատիպ երանգներ: Մեյլերի անվան հետ են կապված մի կողմից՝ էքզիստենցիալիզմի նոր տարատեսակի՝ «հիպպիստական էքզիստենցիալիզմի» ծնավորումը, մյուս կողմից՝ «ջարդված սերնդի»՝ բիթնիկների շարժումը, որը փաստորեն մշակութային յուրօրինակ ընդլվում էր երկրորդ աշխարհամարտից հետո ստեղծված ճգնաժամային երևույթների դեմ:

Մեյլերի կերտած կերպարներն առանձնանում են ոչ միայն իրենց բազմազանությամբ, այլև հեղինակի օգտագործած գեղարվեստական միջոցների լայն կիրառությամբ: Վիպասանի երկերն ավելի հարուստ են տղամարդկանց կերպարների բնութագրումներով, քեև անտեսված չեն նաև կանացիները: Համաշխարհային գրականության փորձը հաստատում է, որ տղամարդկանց կերպավորումը գեղարվեստական ավելի բարդ խնդիր է, քան կանանց, քանի որ տղամարդիկ, որպես կանոն, ավելի ինքնամիտի են, չի հոգեբանական ներքին պայքարով, որը հիմնականում թույլ է արտացոլվում վերջիններիս արտաքին նկարագրության մեջ: Մինչդեռ կանայք հուզական են, նրանց արտաքին ինքնին հաճախ կարող է բավական խոսուել լինել:

Մեյլերի ստեղծագործության գլուխգործոց երկերից մեկը՝ «Ամերիկյան երազը» վեպը, առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում, ուր հեղինակը մեկ անգամ ևս անդրադառնում է անհատի ու հասարակության փոխհարաբերության խնդրին և վեր հանում ամերիկյան իրականության մեջ տեղ գտած բազմաթիվ արատավոր երևույթներ: Վիպական գործողությունները տեղի են ունենում Մանհեթենում և այն էլ ընդամենը քսանչորս ժամվա ընթացքում: Գլխավոր հերոսը Ստեֆան Ռոչեքն է, որը եղել է քաղաքական հայտնի գործիչ, բայց սեփական կամքով հրաժարվել է բաժին հասած փառքից իրեն իսկ անհասկանալի հոգեկան տվյալառքների պատճառով, որոնք ի վերջո նրան կանգնեցնում են փակուղու առջև: Սիա թե ինչպես է վիպասանը նկարագրում իր գրական հերոսին, որը նաև ամբողջ երկի պատմողն է: «Նա խոշոր տղամարդ էր՝ ողորկ մարմնով և շատ ճերմակ մաշկով, ոչ գունատ, այլ թանի՝ վարդագույնի տվող սպիտակ երանգով, միանգամայն ոգեղեն: Այն տպավորությունն էիր ստանում, թե նա մի փոքր լայն էր մեջտեղում, բայց փոխակերպվում

այնքան հարթ էր, որ թվում էր՝ նրա մարմինն ուներ կատարյալ ձև գլխի համեմատ: Նա մեծ գլուխ ուներ, որ սկսվում էր փոքր, դուրս ցցված ծնոտով, միանում հղկված կծատ քթին ու լայն ճակատին: Քանի որ նա կիսով չափ ճաղատ էր, ճակատի լայնությունը թվում էր՝ հավասար էր աչքերից ծնոտն ընկած հեռավորությանը: Որոշ պահերի նա նման էր այն գեղեցիկ մանուկներին, որոնք երեք ամսականում նմանվում են ամրակազմ հիսունհինգ տարեկանի: Իրականում նա վաթսուհինգ տարեկան էր, ֆիզիկապես ազդեցիկ, քանի որ թողնում էր այնպիսի ուժեղ տպավորություն, որ հատուկ է գեներալներին, խոշոր ֆինանսիստներին, քաղաքական գործիչներին, ծովակալներին, հրատարակիչներին, նախագահներին կամ վարչապետներին»:

Ինչպես տեսնում ենք, վիպասանն այստեղ գործածում է մի շարք մակդիրներ, որոնք ոչ միայն նկարագրում են հերոսի արտաքինը, այլև ստեղծում նախապայման ընթերցողի կողմից կերպարի ընկալման համար: Այդ տպավորությունը հատկապես ուժգանում է համեմատության ներմուծումով, որն ընդգծում է կերպարի հակասական էությունը: Ռոջեքն ուժեղ է, տպավորություն գործող, սակայն միաժամանակ՝ երեխայի նման անօգնական ու ենթակա կյանքի հարվածներին, որոնց անընդունակ է դիմագրավել: Եվ ահա հեղինակը տալիս է հերոսի նախկին կնոջ նկարագիրը. «Նա գեղեցիկ կին էր՝ Դեբորան, նա խոշորակազմ էր: Բարձր կրունկներով նա ինձնից ամենաքիչը մի ոտնաչափ բարձր էր: Նա սև մազերի հսկայական կույտ ուներ և ծակող կանաչ աչքեր՝ բավականաչափ ամբարտաժան և հանգամանքներից կախված՝ բավականաչափ զվարճալի թագուհուն վայել լինելու համար: Նա ուներ իռլանդական մեծ քիթ ու լայն բերան, որը շատ ձևեր էր ընդունում, բայց նրա արտաքինը հավակնում էր նրան գեղեցկուհի կոչելու, քանի որ մաշկը կաթնաճերմակ էր, և այտերը ներկված էին գեղեցիկ վարդագույնով. իռլանդական դարավոր մշուշն էր կերտել այդ արտաքինը: Սկզբից գայթակեցնողը, սակայն, նրա ձայնն էր: Նրա դեմքը լայն էր և հեռու՝ ազնիվ լինելուց. նրա ձայնը դավաճանության գլուխգործոցն էր»:

Այսպիսով, կրկին մի շարք մակդիրների կիրառությամբ Մեյլերը կերտում է մի կնոջ կերպար, որը թեև շատ քիչ է երևում, բայց առանցքային դեր է կատարում վիպական ամբողջ հյուսվածքում: Կինը զոհ է գնում ամուսնու՝ սպանություն գործելու անկառավարելի բնագոյին, բայց մնալով անտեսանելի՝ շրջադարձային դեր է խաղում վերջինիս հետագա ճակատագրում: Եթե ուշադրություն դարձնենք բնագրին, ապա ակնհայտ է, որ կնոջ համար օգտագործելով «գեղեցիկ» մակդիրը, որը սովորաբար անգլերենում գործածվում է՝ բնորոշելու համար տղամարդկանց, վիպասանն ի սկզբանե ընթերցողին նախապատրաստում է հանդիպման կանացի այնպիսի կերպարի հետ, որն ավելի շուտ առնական է: Դեբորայի կերպարն ավելի է ամբողջանում է, երբ հեղինակն ավելացնում է հետևյալ համեմատությունը. «Երբ նա բարկանում էր, մի կարմրություն, ինչպես անհամար ցաներ, բծերով էր ծածկվում նրա պարանոցը»:

Հենց այս համեմատությունն էլ առավել խորությամբ է բնութագրում հերոսուհու ներաշխարհը, որի կամային հատկություններն առավելապես համադիր են արական սեռին, քան կանացի թույլ բնույթին:

Եթե Դերորայի կերպարի արաման համար հեղինակը սահմանափակվում է սեղմ նկարագրություններով, ապա գլխավոր հերոսի ներաշխարհի լիարժեք բացահայտման նպատակով նա դիմում է բազում այլ միջոցների և ի թիվս այլոց օգտագործում փոխաբերություն, որը դարձյալ վերաբերում է բուն հերոսին, բայց ասվում է հերոսուհու անունից. Նա լսեց՝ ինչպես էր օձը խլրտում իմ սրտում. հեռախոսով հաջորդ առավոտյան նա ասաց ինձ, որ ես չարիք էի, և մեկնեց մենաստան Լոնդոնում, ուր նա ապրել էր տարիներ առաջ:

Այս փոխաբերության գործածմամբ արծակագիրն ընթերցողին նախապատրաստում է հանդիպման մի անձնավորության հետ, որը չարիք է գործում՝ ինքն էլ չընկալելով և բնավ չպատճառաբանելով արարքների իմաստը: Այդ «օձն» է, որ նրան մղում է անգիտակից քայլերի:

Ուշագրավ է նաև վեպի առաջին իսկ էջերում Ռոջեքի այն իրադրության վերապատմումը, երբ նա երկրորդ աշխարհամարտի ժամանակ ռազմի դաշտում միայնակ գնդակահարում է չորս գերմանացի զինվորների և աչքի ընկնող ծառայությունների համար արժանանում խաչի: Այդ միջադեպը նկարագրվում է ինչ-որ առեղծվածային նրբերանգներով, և հերոսն ինքն իր հաջողությունը կապում է ճակատագրի ու լուսնի առկայության հետ: Այստեղ հարկ է նշել, որ վեպում լուսինը համարյա անձնավորված է ու հաճախ հանդես է գալիս խորհրդատուի դերում, թեկուզև՝ ոչ բարի: Սիւս թե ինչպես է Ռոջեքը նկարագրում այդ միջադեպը. «Երբեմն ես ցամակնում եմ հավատալ, թե դեռ ունեմ իմ այցեքարտը մտավորականների կարգում, բայց թվում է՝ ընկերակցում եմ միջակների հորդային, որը լսում է հանրահայտ երգեր և գործում զուգադիպություններին համաձայն: Ճշմարիտ տարբերությունն իմ ու նախագահի միջև գուցե այն է, որ ես ավարտեցի լուսնի չափազանցված գնահատմամբ, քանի որ ես նայեցի անդունդից ցած առաջին իսկ գիշերը, երբ սպանություն գործեցի. չորս մարդ, չորս առանձին գերմանացիներ՝ մահացած լիալուսնի տակ, մինչդեռ ձեքն, ինչքան ինձ հայտնի է, երբեք անդունդը չի տեսել»:

Փոխաբերության օգտագործումով վիպասանն ընդգծում է սպանության ներքին բնագըղ, որ ներքուստ կրծում է հերոսին, մինչև որ լիարժեք հազուրդ չի ստանում: Ռոջեքի ներսում հավերժաբար պայքարում են չարիքն ու բարությունը, ինչպես նաև երկչոտությունն ու հաստատակամությունը: Չնայած նա հասել է որոշակի հաջողությունների, բայց կորցրել է ինքնատիրապետումն ու հայտնվել հուսահատության եզրին: Այս զգացումներն են փորրկվում հերոսի ներաշխարհում, ուստի դրանց առավել շեշտադրման նպատակով հեղինակն օգտագործում է մի շարք փոխաբերություններ և մի ընդարձակ համեմատություն. «Ես ինձ զգում էի, ինչպես կիսապաշտպան, որ հաղթահարել էր հիսուն յարդանոց վագրը»: Եվ ապա ավելացնում է. «Իսկ այդ կապույտ

աչքերը շարունակում էին սևեռում նայել իմ թարմացված հիշողության մեջ: Մինչ ես նորից փորձեցի հարվածել, վերքից եկող ալիքն ինձ հետ մղեց՝ գլուխս ստիպողաբար հակելով գետնին՝ ինչ-որ սեփական ցանկություննից դրդված»:

Իսկ ահա թե ինչպիսի համեմատության միջոցով է վիպասանը նկարագրում հերոսի վեհերոտությունը. «Նման անբուժելի հիվանդի, որի ունակությունները լքում են նրան մեկը մյուսի հետևից, այդպես իմ ծայրը լռեց կոկորդոսն»:

«Ամերիկյան երազ» վեպի գրական հերոսուհիների շարքում էական տեղ է զբաղեցնում Ռոջեքի սիրած աղջիկը՝ Չերրին, որի կերպարը հեղինակը կերտում է համեմատական համակրանքով: Այս աղջիկը պատահաբար հայտնվում է հենց այն պահին, երբ Ռոջեքը սպանել էր կնոջը, և ոստիկանները ժամանել էին դեպքի վայր: Զպանցիկ հայացքը ճակատագրական է դառնում հերոսի համար: Չերրիին վիճակված է փրկարար հրեշտակի դերը. նրա սերը բալասանի ազդեցություն է ունենում Ռոջեքի վիրավոր հոգու համար, սակայն ճակատագիրը դարձյալ պայմաններ է թելադրում: Աղջկա անժամանակ ու անհեթեթ մահը հերոսին նետում է անհուսության գիրկը և ստիպում լքել երկիրն ու հանգստություն փնտրել անորոշ դեգերումներում: Սիա թե ինչպես է վիպասանը նկարագրում Չերրիին, որը բարի սովորական երգչուհի էր. «Նա թանկարժեք շուռի աղջկա նուրբ տեսք ուներ, արծաթյա խորամանկություն կար նրա դիմագծերում: Եվ խաղաղ, հեռավոր փոքրիկ ամբարտավանություն: Նրա քիթը դասական էր: Այն կոպտորեն վեր էր ցցված մոտորանավակի նման, որ նախատեսում է ջուրը ճեղքել»: Սակդիրների և հատկապես համեմատության գործածումով վիպասանը որոշակի համակրանք է ցուցաբերում հերոսուհու հանդեպ ու ակնարկում այն շրջադարձային դերը, որ պետք է կատարեր Չերրին Ռոջեքի կյանքում: Սակայն քիչ անց գրողն ընդգծում է աղջկա սովորական էակ լինելը՝ օգտագործելով հետևյալ համեմատությունները. «Նա մերթ նման էր տասնյակ գեղեցիկ շիկահերների, մերթ էլ՝ հարևան փոքրիկ տղայի»: ("She looked at different instants like a dozen lovely blondes, and now and again a little like the little boy next door." p. 97) Չերրիի կերպարն ամբողջանում է և լիովին բացահայտվում, երբ չարիքի մասին խոսելիս վիպասանը նրան ներկայացնում է հետևյալ փոխաբերությունների միջոցով. «Նա մատները խաղացրեց ծնոտիս տակ, նրա կանաչ աչքերը մոմի լույսի ներքո լի էին կծվությամբ, շագանակագույնի, ոսկու և դեղինի ձայերով: Այս լույսի տակ նա կատու էր՝ կատվի աչքեր, կատվի քթանցք, կատվի խորամանկ բերանով»:

«Ամերիկյան երազ»-ում Մեյլերը ներկայացնում է նաև կերպարներ, որոնք ինչ-որ տեղ արծարծում են դասակարգային խտրականության թեման: Լինելով հրեա՝ վիպասանը չէր կարող անտեսել այդ խնդիրն ու բացահայտել ամերիկյան թվացյալ հավասարության խաբկանքը: Այդ առումով տղամարդ հերոսներից բավական ակնառու է սևամորթ երգչի՝ Շագո Մարթինի կերպարը: Նա դատապարտված է անհաջողության սոսկ այն պատճառով, որ սևամորթ է:

Թեպետ այս կերպարը վիպասանը կերտել է նրբամիտ ժպիտով, սակայն դա բնավ չի նշանակում, թե հակակրանք է տածում հերոսի հանդեպ: Շագոյի նկարագրում հանդիպում են մի շարք համեմատություններ և փոխաբերություններ, որոնք յուրովի ուժգնացնում են կերպարի թողած տպավորությունը. «Նրա ծայրը նման էր քարե հատակին ռետինի գնդակի հարվածի, նրան լսելը նման էր կեսօրվա հետ ընկերակցման, երբ խաղ ես խաղում չեմպիոնի հետ»: Իսկ ահա թե ինչպես է վիպասանը նկարագրում այն հարատև ատելությունը, որ կա սպիտակամորթների և սևամորթների միջև. «Մեր աչքերը հանդիպեցին: Մի ծակող սևեռում հայացք կար նրա աչքերում, որ կծում էր աղի պես, երբ հանդիպում էր իմ աչքերին»: Ապա կերպարը լիարժեք մեկնաբանություն է ստանում այն միջադեպի նկարագրությամբ, երբ Ռոջեքն ու Շագոն կռվում են միմյանց հետ: Այսպիսով, վիպասանն ընդգծում է, որ սպիտակամորթն ու սևամորթը երբեք չեն կարող հաշտ լինել, և վերջինս դատապարտված է պարտության միայն մաշկի գույնի պատճառով: Դրանով է բացատրվում այն անհամադրելի հայացքը, որ դառնում է նեգր երգչի դեմքին. «Նա նայեց ինձ այնպիսի աչքերով, որոնք հանկարծ դարձան վայրի. կարծես հանգստի բացակայությունը նրանց տիպում էր վազվզել խավարասերների նման պայծառ լույսի տակ»:

Մրան զուգահեռ՝ հիշենք նաև մի կանացի կերպարի, որը ծագումով գերմանուհի էր: Թեպետ այդ կնոջն այնքան էլ մեծ տեղ չի հատկացվում վեպի սկզբնամասում, և հեղինակը կատարում է առաջին հայացքից հպանցիկ նկարագրություն՝ գործածելով նման համեմատություն «նման մայր կատվի՝ նա ուսուցանում էր մի նոր փիսիկի՝ ինչպես լսել», բայց վեպի վերջում պարզվում է, որ Ռուտան սովորական լրտես է, որ ծառայում էր մաֆիոզ մի պարագլխի:

Այսպիսով, վերոհիշյալ վեպի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ ամերիկացի վիպասանի երկերում տղամարդ հերոսների կերպավորումն առավել ցայտուն է ու տպավորիչ, քան կանանց, որոնք կամ անորոշ կամ էլ բավականաչափ բացասական դեր են խաղում:

Գրականության ցանկ

1. Norman Mailer "An American Dream", New York, 1964
2. Jean Radford "Norman Mailer- A Critical Study", New York, 1975
3. Barry H. Leeds "The Structural Vision of Norman Mailer", New York, 1969
4. Shlomith Rimmon-Kenan "Narrative Fiction: Contemporary Poetics", London and New York, 1983
5. Anna Izotova "English Idiomatic Phraseology in Fiction", Moscow, 1998
6. John McRae and Roy Boardman "Reading Between the Lines", Cambridge University Press, 1988
7. L. R. Galperin "Stylistics", Moscow, 1977
8. Кухаренко В. А. — "Интерпритация текста", Москва, 1982
9. Нофимова А. И. — "Семантика текста и ее формализация", Москва, 1984
10. С. К. Гаспарян — "Лингвopoэтика образного сравнения", Ереван, 1991
11. С. К. Гаспарян — "Фигура сравнения в функциональном освещении", Ереван, 2000
12. Н. Б. Гвишiani — "Современный английский язык лексикология", Москва, 2000
13. Շարորյան Հ., Նորման Մելլեր. Սպիտակ նեգրը, Երևան, 2007: